

ԱՂՋՆԻՔԱՀԱՅՆՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԱՑԻՆ
ՁԵՎԵՐԸ (XIX Դ. ԿԵՍ—XX Դ. ՍԿԻՋՐ)

Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Մասնագիտական գրականության մեջ կան բազմաթիվ, հաճախ իրարամերժ տեսակետներ ամուսնության ձևերի ծագման պայմանների ու ժամանակի, բնույթի և էության վերաբերյալ: Ուսումնասիրողների մի մասը այն կարծիքին է, թե ամուսնության ամենանախնական ձևը, որը և գերակշռում էր մյուս ձևերին, աղջկա առևանգումն էր, որին պատմականորեն հաջորդել է գնմամբ ամուսնությունը¹: Այլ խումբ գիտնականներ, հենվելով հիմնականում Ֆ. Էնգելսի հայտնի դրույթների վրա, զարգացնում են այն միտքը, թե կնոջ առևանգման ու գնման սովորույթները հանդես են եկել գրեթե միաժամանակ՝ զուգամուսնական ընտանիքի գոյության փուտով: Ուրիշները գտնում են, որ առևանգմամբ ամուսնությունը ամենևին էլ ամենանախնականը և ամենատարածվածը չէր, և որ այն առաջացել է նախնադարյան համայնական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության պայմաններում²: Ինչպես արդարացիորեն նշում են սովետական որոշ ազգագրագետներ, ամուսնության ձևերի պատմականորեն միմյանց հաջորդելու կամ նախորդելու առեղծվածի բացահայտմանը նվիրված մեծաթիվ աշխատությունները միշտ չէ, որ ճիշտ են բնութագրում դրանց բնույթն ու էությունը³: Պետք է ավելացնել նաև, որ ամուսնության վերոհիշյալ երեք ձևերն էլ ազգագրական իրականության մեջ հայտնի են համաժամանակյա գոյությամբ և ունեն կենցաղավարելու իրենց սոցիալական, իրավական և տնտեսական հիմքերը:

Անդրադառնալով այժմ մեր անմիջական թեմային, պետք է նշել, որ ի հաստատումն Ա. Ի. Պերշիցի վերջերս առաջ քաշած տեսակետի⁴, աղձնիքահայերի մեջ ևս ամենատարածված և օրինական ամուսնության ձևը հնուց ի վեր եղել է ընտրած աղջկա ծնողներին պատգամախոսությամբ դիմելը: գերդաստանի նահապետն իր մերձավոր կանանցից կամ տղամարդկանցից մեկին ուղարկում էր աղջկա հոր տուն՝ նախնական համաձայնություն ստանալու, որն այնուհետև ավարտվում էր խնամախոսությամբ: Երիտասարդ կողմերի սեփական ընտրությամբ ամուսնությունը խիստ սակավ էր⁵: Երիտասարդներն անկարող էին ընդդիմանալ ծնողների կամքին, բա-

¹ Տե՛ս օր. Յ. Օ. Թեյլոր. О методе исследования развития учреждений.—Этнографическое обозрение, 1890 № 2, с. 16—26; Л. Я. Штернберг. Семья и род у народов Северо-восточной Азии. Л., 1933, с. 8, 166; М. М. Коваленский. Очерк происхождения и развития семьи и собственности. М., 1939, с. 37—38, 49: Տե՛ս նաև Խ. Սամուելյան, Հայ սովորույթական իրավունքը: Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն, Քիֆլիս, 1911, էջ 38—39:

² Տե՛ս Ֆ. Էնգելս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Եր., 1965, էջ 61, Յ. Թ. Կարապետյան, Выкуп и свадебные обряды и его социально-экономические корни (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 3 Եր., 1950, էջ 77—78):

³ М. О. Косвен. Очерк истории первобытной культуры. М., 1957, с. 134—135; А. И. Першиц. Похищение невест: правило или исключение?—«Советская этнография», 1982. № 4, с. 121—127; Н. А. Кисляков. Семья и брак таджиков. По материалам конца XIX—начала XX в., М.—Л., 1959, с. 195—208.

⁴ К. В. Чистов. Типологические проблемы изучения восточнославянской свадьбы.—Проблемы типологии в этнографии, М., 1979, с. 265—266.

⁵ Տե՛ս Ա. Ի. Քերշից, էջ 127:

⁶ Հմմտ. Դ. Վարդաբեյլյան, Կ. Կարապետյան, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963, էջ 94:

զի, ինչպես ժողովուրդն էր ասում, նրանք «բերան ունեին, բայց լեզու չունեին»⁷: Հաճախ ամուսնացող զույգը անծանոթ էր մնում մինչև առաջաստի գիշերը⁸: Հայտնի են դեպքեր, երբ հարսանյոթի տգեղ լինելու և փեսացուի ղուր շգալու պատճառով վերջիններս գիշերով հեռացել են հայրենի տնից ու բնակավայրից: Ընտրությունը կատարվում էր այն հեռանկարով, որ ազգատոհմը և տոհմանդամ ընտանիքն ապահովվեին աշխատավոր և տոհմիկ զորավիգ կանգնող սերնդով: Աղջիկ ընտրելու հարցում հիմնականում հաշվի էր առնվում նրա ազգատակը, ընտանիքը, ծնողների վարքագիծը, նրանց հեղինակությունը համայնքում, ունեցվածքը, դասային պատկանելությունը և հետո միայն աղջկա անձնական հատկանիշները և երիտասարդ զույգի ֆիզիկական բարձրամասնությունները: Ինչպես Վ. Բոդյանն է նկատել, պատգամախոսությամբ ամուսնության շնորհիվ կանխվում էին մերձավորների ամուսնության դեպքերը, հասակային անհամապատասխանությունը, պատահական ամուսնությունները և այլն⁹:

Աղմկիքի հայ բնակչության մեջ աղջկա առևանգման դրդապատճառներից էին խալան (գլխագին) վճարելու անկարողությունը, իգական սեռի սակավությունը, բանակ զորակոչվելուց խուսափելը և մասնակի դեպքերում՝ ծնողների անհամաձայնությունը, երբ երիտասարդները միմյանց սիրում էին, իսկ ծնողները դեմ էին ամուսնությանը, կամ տղայի կողմը համաձայն էր, իսկ աղջկա ծնողները դեմ էին¹⁰:

Աղմկիքի լեռնային շրջաններում հնավանդ, նահապետական հարաբերությունների համեմատարար ավելի կալուն պահպանվածության պայմաններում առևանգումը հղի էր վտանգներով, երկու ազգատոհմի միջև ծագում էր թշնամություն, որը հաճախ ավարտվում էր «պատիվն արյան գնով մաքրելով»: Այդ էր պատճառը, որ առևանգողներն ապավինում էին հայ աղջեցիկ ընտանիքներին կամ նույնիսկ զորեղ քուրդ աղաներին, իսկ հաճախ էլ հեռանում էին լեռները, մինչև որ միջնորդների աջակցությամբ հաշտություն էր կայացվում թշնամացած կողմերի միջև¹¹: Համեմատաբար հեշտ լուծիչ էր այն հակասությունը, երբ առևանգումը կատարվում էր աղջկա և տղայի փոխադարձ համաձայնությամբ¹²: Նման ամուսնությունը համայնքում դիտվում էր որպես «աննամուսնություն», իսկ իր կամքով տղայի հետ փախած աղջկան համարում էին «ամբողջ լուծեցող», «եբուսի փարդեն պատռած»¹³: Այլ էր բանը, երբ աղջկան փախցնում էին բռնի ուժով, հատկապես այն դեպքում, եթե նա նշանված կամ ամուսնացած էր լինում: Բազմաթիվ վկայություններ կան, ինչպես գրավոր, այնպես էլ մեր կողմից հավաքած ազգագրական նյութերի մեջ, թե ինչպես նմանօրինակ առևանգումների ժամանակ բանը հասել էր արյան վրիժառուության¹⁴ և կամ վերջացել նյութական մեծ կորուստներով¹⁵: Հայտնի են դեպքեր, երբ կնոջ

⁷ Տե՛ս Ռ. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ Դան), տ. № 13, էջ 3: Հակառակ պարագայում ծնողների և հասարակության կողմից ենթարկվում էին պարսավանքի, զրկվում հայրական ունեցվածքը ժառանգելու իրավունքից: Ծնողներից մերժված տղաները, օրինակ՝ Բաղեշում, հասարակական պարսավանքից խույս տալու նպատակով հեռանում էին քաղաքից (Տե՛ս ԴԱՆ, տ. № 1, էջ 39):

⁸ Աղբրդում տղա կամ աղջիկ «կարգելը ծնողներուն համար քմահաճություն մըն էր պարզապես» և որ «պսակ դրած՝ անկե հետո տարիներ անցած են և ան տակավին չի ներվիր հարս ու փեսին իրարու հետ երկու խոսք փոխանակիլ»: Դրա համար էլ երիտասարդ հարսը համայնքի տղամարդկանց շրջանում երբեմն չէր կարողանում զանազանել իր ամուսնուն (տե՛ս «Արևելք», 1899, № 3982): Իսկ «Ամուսնական զեղծմունք ի զավատս» խորագրով հոդվածում հավաստվում է, թե «...հեռավոր գյուղից հարս մը կը բերեն ուրիշ գյուղ մը: Առաջաստի օրվան գիշերը իզուր փեսայն կստիպե հարսը խոսելու, զոր խոսեցնելը անհնար կլինի: Հարսը համր էր: Այդպիսի դեպքերը հազվադեպ չեն: Երկու ամուսնու, որք հետամուսնության միայն զիրար պիտի ճանչնան, կարող են իրարու նկատմամբ համակրություն չզգալ, իրենցմե մին կարող է ուխտավոր (անպիտան, տգեղ նշանակությամբ.—Ռ. Ն.) լինել, բայց և այնպես նորա ստիպված են կենակցել իրարու հետ» («Մարիս», 1885, № 3756, էջ 671—672): Հմմտ. «Բյուրակն», 1893, թիվ 210, էջ 181:

⁹ Վ. Բոդյան, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 134:

¹⁰ Հմմտ. Խ. Սամուելյան, Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն, էջ 51—53, Ա. Ո. Սերսու, նշվ. աշխ., էջ 121—122:

¹¹ Ե. Կարապետյան, Սասուն. ազգագրական նյութեր, Եր., 1963, էջ 50—53, ԴԱՆ, տ. № 1, էջ 50—53, ԴԱՆ, տ. № 13, էջ 5:

¹² Հմմտ. Я. С. Смирнова, К типологии обычаев умыкания (по материалам народов Северного и Западного Кавказа).—Проблемы типологии в этнографии, М., 1979, էջ 266—267.

¹³ ԴԱՆ, տ. № 1, էջ 51:

¹⁴ ԴԱՆ, տ. № 4, էջ 126:

¹⁵ Առևանգման մի դեպքի ժամանակ, օրինակ, հաշտեցումը հնարավոր է դարձել 40 ոսկի,

առևանգումը պատճառ է դարձել ոչ միայն ազգատոհմերի, այլև տարբեր գյուղական համայնքների միջև թշնամություն¹⁶:

Ինչպես արդեն նշվել է, ամուսնությունն Աղձնիքում հիմնականում իրականացվում էր տղայի և աղջկա ծնողների, ինչպես նաև համայնքում մեծ դիրք ունեցող տարեց տղամարդկանց և կանանց կամքով ու ցանկությամբ: Իրա արտահայտություններից մեկն էլ օրոհոցախազի միջոցով նորածիններին նշանելու սովորույթն էր¹⁷, որով երկու կողմերը ծնողները համարվում էին խնամիրներ և կատարում էին խնամիրական բոլոր պարտավորությունները: Սասունում այս երևույթը կոչվում էր «օրուց խազի», «օրուց նշի»¹⁸ կամ «բշիկ-քյարթմա»¹⁹: Երբեմն օրոհոցախազին նախորդում էր լուկ «խոսկապը», երբ նորածինները տարբեր սեռերի էին պատկանում, այդ «խոսկապը» դարձյալ վավերացվում էր օրոհոցախազով²⁰: Որպեսզի նման պայմանավորվածությունն ավելի հաստատ ու իրագործելի դառնար, երբեմն սրբագործվում էր ավետարանի մագաղաթի վրա արձանագրվելով²¹: XIX դ. և XX դ. սկզբին այդ սովորույթի հարատևումը պայմանավորված էր ինչպես ավանդույթի ուժով, այնպես էլ քաղաքական և սոցիալ-տնտեսական նկատառումներով, որպիսիք էին՝ 1) ազգային-քաղաքական հանգամանքները՝ բուրդ և թուրք առևանգիչներից ազատ պահելու համար, 2) Սասունում և Աղձնիքի մյուս շրջաններում իգական սեռի դանդաղ աճը, այսինքն՝ աղջիկների սակավությունը, որի հիմնական պատճառը նրանց մահացությունն էր, որպես խտրական դաստիարակության և, մյուս կողմից, քրդերի և թուրքերի կողմից հաճախակի կատարվող առևանգումների հետևանք, 3) մանուկ հասակում մահացությունը կանխելու ակրեկալիքը՝ այն հավատը, որ նշանածի բախտը կարող է նրան մնացական դարձնել, 4) համայնքում հարգանք վայելող ազգատոհմի հետ վաղորդ բարեկամանալու և պանդիտություն մեկնող երիտասարդների կապերը ծննդավայրի հետ անխզելի դարձնելու միտումները:

Այս ամենը, իհարկե, չի նշանակում, թե Աղձնիքում ամուսնությունը բացառապես ծնողների կամքով է իրագործվել: Ինչպես ցույց են տալիս դաշտային ազգագրական նյութերը, ավագ սերունդը, ղեկավարվելով տոհմական շահերով, երբեմն համաձայնվում էր երիտասարդների ամուսնական ընտրություններին: Երիտասարդ զույգերի հանդիպման, փոխադարձ ճանաչման ու ընտրության առիթներ էին ծառայում ամենօրյա հարեանական կապերը, մանկական ու պատանեկան տարիքում համատեղ խաղերն ու դաշտային աշխատանքները, ջրի գնալը, փոօզնություն կարգով կոլեկտիվ աշխատանքները, եկեղեցի հաճախելը, ուխտագնացությունները, Բարեկենդանի, Նավասարդի, Համբարձման և այլ տոնակատարությունները, հարսանյաց և այլ կարգի ծիսական հանդեսները: Պատանիներն ու աղջիկները փոխադարձ համակրանք առաջացնելու համար զուգվում ու զարդարվում էին նոր զգեստներով, պերճանքի առարկաներով, գործարդում զանազան հմայական միջոցներ: Աղջիկներն իրենց ամթխած ու համեստ էին պահում, իսկ տղաներին բնորոշ էր ուժի, խիզախության, ճկունության ու ճարպկության ցուցադրումը զանազան խաղերի և այլ միջոցներով:

Աղձնիքում գաղտնի ընտրությունը դրսևորվել է գործնական և ծիսական բազմազան հնավանդ ձևերով: Իբրև տղաների սիրո առաջարկության միջոց ծառայել են տեսողական հնարները (աչքով անել, դիմազգծի շարժել, ձեռնալեզու օգտագործել և այլն) և շփման բազմազան ձևեր (ձեռքսեղմումը, թևով թևին հպվելը, թևանցուկ լինելը, օձիք բռնելը և այլն): Նման ղեկքերում աղջկա համաձայնությունն արտահայտվում էր լուռությամբ: Հնագույն ժամանակներից է վեր Աղձնիքում, ինչպես և Հայաստանի այլ պատմա-ազգագրական շրջաններում ընտրելու և յուրային դարձնելու հայտնի միջոցներից էր աղջկա համբուրելու ծիսական սովորույթը, մի բան, որի գոյությունը հավաստում է վաղ ավատական Հայաստանի գրավոր հուշարձան համար-

3 արտ, 1 դաշույն, ինչպես նաև փախցնողի կողմի աղջիկներից մեկին տուժողի տղային կնություն տալու գնով միայն (տե՛ս ԴԱՆ, տ. № 6, էջ 90—91):

¹⁶ Նույն տեղում, էջ 87—91:

¹⁷ Ֆ. Էնգելսն այս սովորույթի առաջացումը հասցնում է մինչև խմբամուսնության ժամանակաշրջանը: Տե՛ս Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Եր., 1965, էջ 105—106: Օրոհոցախազի միջոցով ընտրությունը արձագանք է գտել «Սասունցի Գավիթ» էպոսում: Տե՛ս Ա. Մ. Першину, О некоторых этнографических сюжетах в армянском народном эпосе «Давид Сасунский». Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1951, էջ 54:

¹⁸ Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 237:

¹⁹ Ե. Կարապետյան, նշվ. աշխ., էջ/84:

²⁰ Նույն տեղում:

²¹ Տիգրան Մկունդ, Ամիտայի արձայանները, Ուիհոթն նյու ձերգի, 1950, հ. 1, էջ 12:

վող «Արեւնք յաղթող թագաւորաց» դատաստանազրքի 57-րդ հոդվածը²², և որի վերաբերյալ առատ նյութ է պարունակում մեր ժողովրդական էպոսը²³:

Միսական համբույրով յուրային դարձնելու այս սովորույթի այսակերպումը պետք է համարել խնամապազը, որը XIX—XX դդ. հայկական հարսանիքի կարևոր ծիսական տարրերից էր: Միսական համբույրով ընտրության հետ, ըստ երևույթին, կապված էր նաև կնոջ կամ աղջկա գեմքը կտածումով զարդարելու սովորույթը, որի վերաբերյալ Տիգրանակերտում գրառումներ է կատարել Գարեգին Սրվանձտյանցը²⁴:

Միտ արտահայտության և ամուսնության առաջարկության ամենատարածված միջոց Հայաստանում ծառայել է տղայի կողմից խնձորի հանձնումը աղջկան²⁵: Խնձորով ընտրելու մեզ հայտնի ամենանախնական եղանակը, որ վկայվում է «Սասունցի Դավիթ» էպոսում, իրագործվել է աղջիկների ձեռքով տղաներին խնձոր հանձնելով և համարվում է մայրիրավական տոհմային սովորույթ²⁷: էպոսում աղջիկների կողմից սիրտ առաջարկություն է արվում նաև տղաներին նամակ, դիմանկար²⁸, մատանի ուղարկելու միջոցով²⁹:

XIX—XX դդ. Աղձնիքում գործող սովորույթի համաձայն աղջիկներն ու տղաները, որպես առաջարկության միջոց, խնձորից զատ, փոխանակում էին նաև նուռ, թաշկինակ, մատանի, ուլունք և այլ իրեր³⁰:

Իր ուզած տղային կամ աղջկան յուրային դարձնելու նպատակով իրագործվում էին նաև բանազան կախարդական հնարներ: Այսպես, Բաղնշում սեր առաջացնելու նպատակով «Քուրթ ու գիր» էին անում, այն թաղում էին սիրված տղայի կամ աղջկա տան շնձի տակ կամ յուրայիններից մեկի միջոցով գաղտնի խմել էին տալիս գիր արված թղթի շուրթ³¹:

Աղձնիքում, ինչպես և ողջ Հայաստանում, հայտնի էին նաև ծիսական գուշակողական կարգի ընտրության ձևեր: Միրածի հետ ամուսնանալու հույսով տղան կամ աղջիկը յոթ տարի պահում էր Սուրբ Կարապետի պատը: Ամուսնության հովանավոր աստված Ս. Սարգսի պատին եփվող փոխնդե խաշիկից երիտասարդները մի գդալ լցնում էին հացի վրա և դնում տան կտուրին կամ ծառի ճյուղին և հետևում թռչուններին, որոնք կարող էին կտցել հացը և թռչել: Ընթացքում էր, թե ինչ ուղղությամբ նրանք թռչնին, այդ կողմերից էլ լինելու էր ապագա փեսացուն կամ հարսնացուն: Կամ գատիկ կոչված միջատը դնելով փփի մեջ, ասում էին՝ «Ջատիկ, գատիկ, ինձ որտեղ պիտի նշանես»: Ջատիկը ինչ ուղղությամբ թռչեր, այդ կողմից էլ սպասվում էր հարսնացուն կամ փեսացուն³²: Նույն օրը պատանիներն ու աղջիկները շոտ կուզու (աղի րլիթ) էին ուտում և ծարավ մնալով՝ քնում: Ով որ երազում շուր տար նրանց, նա էլ, իբր, կլիներ ապագա ամուսինը³³: Այդ նույն նպատակով Համբարձման տոնակատարության օրը, աղջիկները ժողովկներից պսակներ էին հյուսում և նետում պաշտվող քարերին³⁴:

Հոժարակամ ընտրությամբ ամուսնանալու իրավունքը գործնական կիրառություն է ունեցել վաղ ավատական Հայաստանում, որը դիտվել է որպես կանոնական շահանիշ և խրախուսվել նկղեցու կողմից: Վերջինս եռանդուն պայքար է մղել հանուն դրա, ընդդեմ ծնողների բռնադա-

²² Տե՛ս Ս. Հովնաթեյան, Նշանադրությունը վաղ ավատական Հայաստանում («Բաների Երևանի համալսարանի», այսուհետև՝ ԲՆՀ, № 3, էջ 198):

²³ էպոսում մայրիրավական կարգով աղջիկների կողմից ընտրելու ձևերից է ծիսական կրկնակի համբույրը՝ ճակատին և թևին, որով դաշ-խալ թողնելով, Խանդավազ ուղբնականների մեջ ընտրում է Դավիթին՝ վրդովելով ուղբնական 40 փահլանների (տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, Եր., 1936, էջ 211—212):

²⁴ Տե՛ս Գարեգին Սրվանձտյանց, Թորոս Աղբար, հ. Բ, Կ. Գոլիս, 1884, էջ 226—227:

²⁵ Հմմտ. Ե. Լալայան, Վայոց Ձոր. («Ազգագրական հանդես», այսուհետև՝ ԱՀ, գ. 13, Թիֆլիս, 1906, էջ 144): Նույնի, Գանձակի գավառ. (ԱՀ, գ. 6, Թիֆլիս, 1900, էջ 246): Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 131—132:

²⁶ «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 33, 96, 1072, հ. Բ, Եր., 1952, էջ 604:

²⁷ Տե՛ս Վ. Բղոյան, Ընտրության և ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում, ԲՆՀ, 1976, № 1, էջ 85—86:

²⁸ Տե՛ս «Սասունցի Դավիթ», Եր., 1939, էջ 66, «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 142, 610, 849, 865, հ. Բ, մ. Բ, էջ 144, 509:

²⁹ «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 987—990, հ. Բ, մ. Բ, էջ 691—692:

³⁰ ԴԱՆ, տ. № 2, էջ 209:

³¹ ԴԱՆ, տ. № 1, էջ 37: «Գրի», որպես հմայական միջոցի մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Одабашян. Народные верования (по материалам рукописных талисманов XV—XIX вв.), (Кавказский этнографический сборник, М., 1976, էջ 107—130):

³² ԴԱՆ, տ. № 2, էջ 212:

³³ ԴԱՆ, տ. № 11, էջ 3:

³⁴ Տե՛ս «Արևելք», 1895, № 3395:

տությամբ կատարված ականա ամուսնութիւնները³⁵: «Սասնա ծռերում» տարբեր էրանգներով արտահայտված է հոծարկամ ընտրությամբ ամուսնանալու իրավունքը: Այդ ամուսնութիւնը դրսևորվում էր առավելագույն մայրատոհմային սովորութիւններով. սիրո և ամուսնության առաջարկութիւնը հիմնականում աղջիկներն էին անում³⁶, որպիսի երևույթը Սասունում հավաստում է X դ. պատմիչ Քովմա Արծրունին³⁷:

Ըստ բանահյուսական և միջնադարյան կանոնական գրականության նյութերի կարելի է ասել, որ հարազատների կամքով և փոխադարձ հաճությամբ ընտրություն կայացնելու ձևերը Հայաստանում գոյություն են ունեցել զուգահեռաբար:

«Սասունցի 'Իսկիթ» էպոսում արտահայտված են նաև հայրատեղային (պատրիզկայ) բնակվածության տարբեր: Աղջիկն ամուսնանալու իր ցանկութիւնը կարող էր հայտնել անձամբ կամ միջնորդի միջոցով (որի դերը էպոսում ստանձնել է աշուղը, նամակատարը) նկար ուղարկելու, խնձոր նվիրելու, իսկ տղան՝ աղջկանը հրապարակով խաշածն համրորելու եղանակով: Սակայն նախնական շրջանում տեղի ունեցող ազատ ընտրությունն ու ամուսնութիւնը հետագայում սոցիալ-տնտեսական փոփոխված հարաբերությունների պայմաններում աստիճանաբար ենթարկվում են բռնադատման՝ ընդունում են գաղտնի բնույթ, որի հետևանքով հանդես է գալիս փոխադարձ միջնորդության սովորութիւնը: Միջնորդների միջոցով էր, որ երիտասարդ տղաներն ու աղջիկները փոխանակում էին թաշկինակ, խնձոր, նուռ, մատանի և այլն: Երիտասարդների ընտրության մասին ծնողներին համարում էին միջնորդները: Միջնորդները հաճախ ստանձնում էին նաև տղայի կամ աղջկա համար հարմար հարսնացու կամ փեսացու որոնել-գտնելու դերը, որի համար օրինակ Բաղեշում առատ վարձատրվում էին:

Ընտրության ժամանակ խստորեն հաշվի էր առնվում զույգերի ազգակցական աստիճանը՝ մերձամուսնութիւնը ազգատոհմի ներսում բացառելու նպատակով: Ժողովուրդը մորական կողմը կոչում էր կաթի, իսկ հորական կողմը՝ արյան ազգակցութիւն: Ըստ սովորութային իրավունքի, մորական կամ նույնն է՝ խնամիական գծով թույլատրվում էր ամուսնութիւնը երրորդ (հարսի մայրը, քրոջ դուստրը) աստիճանն անց, արյան կամ հորական գծով՝ կողմերի ազգակցական յոթերորդ աստիճանն անց: Հակառակ դեպքում, համայնքը բացասական վերաբերմունք էր ցույց տալիս, իսկ եկեղեցին մերժում էր պսակագրութիւնը: Այս կարգը հավաստված է Ս. Գոշի դատաստանագրքում³⁸: Մերձամուսնութիւնը տարածված էր հարևան քրդերի³⁹, ադրբեյջանցիների⁴⁰, պարսիկների⁴¹ և այլ ժողովուրդների մեջ⁴², մի բան, որ պայմանավորված էր հիմնականում այդ ժողովուրդների մշակութակենցաղային յուրահատկութիւններով: Հեթանոս հայերին ևս, ըստ երևութիւնի, բնորոշ է եղել մերձամուսնության սովորութիւնը, սակայն քրիստոնեական եկեղեցին դատապարտել է այդ երևույթը և մերձամուսնութիւնը կանխարգելող կարգեր է սահմանել: Այդ է վկայում V դ. պատմիչ Փավստոս Բուզանդի հետևյալ տեղեկութիւնը. «...ամուսնութիւն մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացողներն իրար շխարհեն, իրար դեմ դավ չարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնութիւններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնութիւնից և նրանց նմաններից»⁴³, Արդեն V դ. Շահապիվանի եկեղեցական ժողովը արգելել էր ամուսնութիւնը շորորդ աստիճանում⁴⁴:

1900 թ. Հայոց կաթողիկոսի կոնդակներից մեկում հրահանգվում էր պսակի իրավունք չտալ խնամիական շորորդ և ազգակցական վեցերորդ աստիճանում գտնվող անձանց՝ ինամիական հինգերորդի և վեցերորդի միջև, ազգակցական յոթերորդի և ութերորդի միջև թույլատրվում էր ամուսնութիւնը⁴⁵: Ժողովրդի մեջ ամուր է պահել դարերով սրբազործված «յոթը պորտը», թէն այն ուշ շրջանում և աստիճանաբար է կայունացել⁴⁶:

Աղձնիքում, հատկապես Սասուն զավառում կային գյուղեր, որոնցից յուրաքանչյուրը կազմ-

35 Տե՛ս Ս. Հովհաննիսյան, «Սասնա ծռերը» հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան, ԲՅՀ, 1968, № 3, էջ 106:

36 Տե՛ս «Սասնա ծռեր», պատ. ԻԳ:

37 Քովմայի վարդապետի Արծրունայ Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊ, 1887, էջ 209:

38 Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Եր., 1975, էջ 122—124, ծան. 127—130, էջ 124—126, ծան. 131:

39 Տե՛ս Ամին Ավդալ, Անդրկովկասի քրդերի կենցաղը, Եր., 1957, էջ 42:

40 Народы Кавказа, т. II, М., 1962, с. 134.

41 Տե՛ս Լ. Բաբայան, Պարսկաստանի կրակապաշտները, ԱՀ, դ. 18, Թիֆլիս, 1908, էջ 43:

42 Տե՛ս օր., А. А. Алев. Брак и свадебные обряды даргинцев. «СЭ», 1953, № 4.

43 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թարգմանութիւնը, ներթուքութիւնը և ծանոթագրութիւններն ակադ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, էջ 130:

44 Ստ. Կանայանց, Մերձամուսնութիւնը և բազմակնութիւնը քրիստոնեայ Հայաստանում, «Արարատ», 1918, էջ 99:

45 Տե՛ս «Մշակ», 1900, № 81, էջ 1—2:

46 Ստ. Կանայանց, Ամուսնական արտակարգ երևույթներ, «Արարատ», 1917, էջ 517:

ված է եղել մեկ ազգատոհմից, ուստի հարս են բերել այլ գյուղից: Այս ամենով հանդերձ, Աղձ-
նիքի ազգագրական իրականությունը հայտնի են մերձամուսուկության բազմաթիվ դեպքեր, որոնք
ներտոհմային համախմբման ընթացքում, այսպես կոչված «բռնաբեր» ընթացքի, թուրքերի հետ չխառ-
նըվելու և նրանց կողմից աղչված առևանգումը կանխելու միջոց էին: Եղևնի տարիներին մազա-
պուրծ եղած աղձնիքահայերի բեկորները արտագաղթի ճանապարհին և օտար հողում հաստատ-
վելիս «չհաս» զույգին պատկում էին թոնրի կամ պատվողների «արդար անկողնու» շուրջը, որ
մի բացառիկ երևույթ էր հայոց ամուսնական կյանքում⁴⁷:

Ամուսնական տարիքն Աղձնիքում տղաներին 15—18-ն էր, աղջիկներինը՝ 11—14-ը, 17-ն
անց աղջիկը համարվում էր «լոռ», «ղախ», այստեղից էլ՝ «լոռացի է», «ղախացի է» անվա-
նարկումները՝ տանը մնացած կամ պառաված իմաստներով արտահայտությունները: Աշխատա-
վոր ձեռքերի պակասը լրացնելու միտումով և սովյալ ընտանիքի ոգով հարսին վերադաստիա-
րակելու նպատակով երբեմն աղջկանը հարս էին տանում դեռևս արքունքի չհասած տարիքում:
Այդ նույն միտումով եղել են դեպքեր, երբ արքունքի չհասած տղային ամուսնացրել են իրենից
մեծ աղջկա հետ, որպիսի երևույթը արժանանում էր համայնքի նախատինքին և ծաղրի էր
ենթարկվում հենց աղջիկների կողմից, ինչպես դիտվում է մեր կողմից գրանցված մի եր-
բում⁴⁸:

Ամուսնության պարագայում հաշվի է առնվել ունևորության աստիճանը: Դիարբերքի գա-
վառակում աղջիկների «տանը մնալու» և այրի տղամարդկանց հետ ամուսնանալու, անհավասար
տարիքի ամուսնությունների պատճառներից մեկը համարվել է «ծանր» օժիտ պատրաստելու ան-
կարողությունը⁴⁹: Բաղեշում միջնորդների օգնությամբ «լոռացած» աղջիկներին կնություն տալու
նպատակով մեծ օժիտ էին խոստանում⁵⁰, նույն նկատառումներով, երբեմն ամուրի տղաներին
ամուսնացրել են այրի կանանց հետ⁵¹: Այլ էր որբերի խնդիրը: Որբ աղջիկների հետ ամուսնա-
ցող տղաներին համայնքն ազատում էր բանակ զորակոչելու նպատակով կատարվող վիճակա-
հանությունից: Համայնքը կազմակերպում էր նաև որբ տղաների ամուսնությունը՝ հիմնականում
արհեստներ տիրապետող, բայց ամուսնության տարիքն անցած աղջիկների հետ⁵²:

Որոշակի սահմանափակումներ գոյություն ունեին նաև քաղաքաբնակների ու գյուղաբնակ-
ների՝ միմյանց հետ ամուսնանալու խնդրում: Սակավ էին դեպքերը, երբ գեղջկուհու հարստու-
թյունն ու գեղեցկությունը նրան զարձնում էին քաղաքացու հարս, և կամ քաղաքաբնակ աղջկա
ազգատությունը, ազնվությունն ու արատավոր լինելը՝ գյուղացու հարս⁵³:

Բոլորովին այլ հիմունքներով էր իրականացվում ամուրիների և մանավանդ այրիների
ամուսնությունը: Այս պարագայում որպես կանոն շրջանցվում էին ընդունված ծիսական ավան-
դույթները: Այրի կանանց երկրորդ ամուսնությունը սովորաբար կատարվում էր երեխաներ չու-
նենալու պատճառով կամ ազգակից-ապավենի բացակայության, նյութապես անապահով լինելու
հետևանքով: Անզավակ կնոջ ամուսինը մահամերձ վիճակում նյութական և ամենակարևորը՝
բարոյական հանգամանքներ նկատի ունենալով, կնոջը կտակում էր իրենից հետո ամուսնանալ
միայն համայնքում հեղինակություն վայելող այսինչ մարդու հետ: Իսկ երեխա ունեցող կնոջը
երզվեցնում էր՝ շամուսնանալ և երեխաներին կրկնակի շորբացնել՝ ասելով՝ «Կնիգ, իմ գլխարկը
ծոցդ պահիր, իմ պատիվը բարձր պահիր, օջախս շմարիս»⁵⁴: Այրիների ամուսնության մեջ
ամենից շատ շահագրգռված էին նրանց ծնողները, որոնք, ըստ երևույթի, պարտավոր էին դիմել
սկեսրայրին՝ համաձայնություն ստանալու նպատակով: Եթե նա չէր առարկում, անզավակ այ-
րուն էր վերադարձվում ողջ օժիտը, իսկ եթե առարկում էր, օժիտը չէր վերադարձվում, բայց հար-
ուն այնուամենայնիվ նոր ընտանիք էր կազմում: Երեխաներ ունեցող այրին երկրորդ ամուս-
նության դեպքում պարտավոր էր արու զավակներին թողնել նրանց հայրական տանը՝ զրկվելով

⁴⁷ ԴԱՆ, № 6, էջ 93, № 9, էջ 53, № 13, էջ 3—4 և այլն:

⁴⁸ էսօր իրկուն կիրակմուտ ա,

Մենի Գեռնի խավի (հավի) ճուտ ա,

Թալիկ թալվին (ախոռը) թող կուտ ուտա,

Չի բաշարում ճուտ քորա,

Ջանս ետում, քորը հանա...:

կամ՝ Ինչ եմ անում վիզ ու վզնոց,

Իրիկ կուզեմ պառկի իմ ծոց... (Տե՛ս ԴԱՆ, № 1, էջ 42—43):

⁴⁹ Տե՛ս «Արևելք», 1895, № 3328:

⁵⁰ ԴԱՆ, № 1, էջ 40:

⁵¹ ԴԱՆ, № 2, էջ 193:

⁵² Նույն տեղում, էջ 192—193:

⁵³ ԴԱՆ, № 1, էջ 41: Հմմտ. Ե. Լալայան, Մուշ-Տարոն, գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 156:

⁵⁴ Այդպիսի դեպքերում մահամերձը կնոջ երգումը լսելուց հետո շնորհակալություն էր
հայտնում՝ ձեռքը իր ճակատին դնելով (վերը նշված նյութերը տե՛ս ԴԱՆ, № 1, էջ 16—17,
№ 3, էջ 63, № 4, էջ 127, № 9, էջ 176):

նակ օժիտը ետ ստանալու իրավունքից: Բացառիկ դեպքերում միայն այրին իր հետ նոր ընտանիք էր տանում նաև տղա երեխաներին: Նոր ընտանիքում կնոջ հետ եկած երեխաներին կոչում էին մազի կամ ճալբէ, շնայած նրանք նոր ամուսնուց ծնված երեխաներին հավասար ծառանգական իրավունք ունեին: Մահացած ամուսնու ընտանիքը, որպես կանոն, լավ հարաբերությունների մեջ էր մնում ինչպես այրի հարսի, այնպես էլ նրա նոր ամուսնու հետ, որին նրանք փոխնակ էին կոչում: Երկրորդ ընտանիքում նորածին հայտնվելու դեպքում նախկին ընտանիքը հրավիրում էր իրենց երբեմնի հարսին ու նրա փոխնակ-ամուսնուն և խնջույք կազմակերպում⁵⁵:

Տնփեսայությունն Աղձնիքում հազվադեպ երևույթ էր: Ազգատոհմը ձգտում էր այն բացառել, որպեսզի ունեցվածքը ժառանգվեր ազգի մերձավորների կողմից: Եվ պատահական չէ, որ համայնքը յուրօրինակ շահագրգռություն արտահայտության թեկնածու էր առաջարկում հեռավոր տոհմանդամ, բայց տակավին արբունքի շհասած և որը տղաներին՝ այդ ընտանիքի ոգով դաստիարակելու և իրենցով անելու նպատակով⁵⁶: Տնփեսայությունը որպես այդպիսին նման է մայրատեղային (մատրիլոկալ) բնակվածության վերապրուկային ձևերին, թեև դա կարող էր լուի հետնազույն շրջանի երևույթ լինել⁵⁷:

Նույն կարգի երևույթների ստոր կարելի է դասել նաև քենամուսնություն (սորորատ) և տեգրամուսնություն (լեիրատ) սովորույթները: Ինչպես վկայում են բանահյուսական⁵⁸ և XIX դ. և XX դ. սկզբների նյութերը⁵⁹, սորորատի հետքերը դեռևս նկատելի էին Աղձնիքի հայ բնակչության կենցաղում: Անշուշտ, քենամուսնության հարցում ոչ պակաս կարևոր էր հարցի տընտեսական և բարոյական կողմը: Նույնիսկ գոյություն ունեւր համապատասխան առած. «Մեռնի կնիք, առնի քենիք»⁶⁰:

Արեւմտահայերի անսպասելի կյանքը, հատկապես հայ երիտասարդներին սպառնացող վտանգներով հղի պանդխտությունը և քրդական ու թուրքական զինված շոկատների բարբարոսական հարձակումներն ու հալածանքները հաճախ ավարտվում էին նշանված կամ նոր ամուսնացած երիտասարդների սպանություններով: Հայ բնակչությունը հարկադրված, հանուն իրենց ազգատոհմի և ընտանիքին պատճառած կորուստը արագ կերպով փոխարինելու, իրենց հարսնացուին այլոց կողմից շտիրանալու, իրենց ազգատոհմի խնամիական կապերը շրջահատելու և ոչ պակաս նշանակություն ունեցող նշանդրների և հարսանիքի համար արված ծախսերը նպատակին ծառայեցնելու միտումներով, նշանված տղայի սպանության կամ մահվան դեպքում նրա նշանածին ամուսնացնում էին մեռնողի ամուսնի եղբոր հետ: Եղել են դեպքեր, երբ հարսի տարիքը մեծ լինելու պատճառով մեռնողի եղբորն ամուսնացրել են նրա փոքր քրոջ հետ: Թեև հազվադեպ, բայց եղել են դեպքեր էլ, երբ կանանց սակավացման պատճառով այրի կնոջն ամուսնացրել են նրա ամուսնու մերձավորներից մեկի հետ⁶¹:

⁵⁵ Գան, տ. Ձ 3, էջ 95—96, տ. Ձ 4, էջ 122, 145:

⁵⁶ ԳԱՆ, տ. Ձ 1, էջ 16: Աղձնիքում, բացառիկ դեպքերում, հանուն ընտանիքի «ծխի» և «օջախի» պահպանության, տնփեսայության սկզբունքով, մահացած որդու կնոջ համար նոր ամուսին էին ընդունում իրենց հարկի տակ և որդիացնում:

⁵⁷ Այդ տեսակետից ուշագրավ է Կ. Վ. Զիստովի այն կարծիքը, թե որոշ երևույթներ ուշ շրջանում ձևով հիշեցնում են վաղ շրջանի որոշ ինստիտուտներ, որոնք դրանց հետ ծագումնաբանական կապեր չունեն: Այդպիսի երևույթներն անվանում են «երկրորդային կարգի», ուստի սխալ կլինեւր, եթե «երկրորդային կարգի» տարրերը կապվեին առաջնային կարգի տարրերին և մեկը թեւեւվեր մյուսից: К. В. Чистов, Традиционные и вторичные формы культуры («Народы и расы», вып. 5, М., 1975, էջ 32, 41):

⁵⁸ Հայկական էպոսի տարրեր ճյուղերում և պատմներում պահպանվել են մի շարք կարևոր հիշատակություններ, որոնք հայ ժողովրդի հեռավոր անցյալի ամուսնա-ընտանեկան կապերի ու բարքերի անդադարձուններն են: Այսպես, օրինակ, Սանասար և Բաղդասար դուցազն եղբայրները միտաբանակ ամուսնանում են երկու քույրերի հետ: Սա արդեն ամուսնության սորորատային ձևի վերհուշ է: Այդ նույն ամուսնանձի աղճատված մի տարրերակ կարելի է համարել Մոկաց Հովհաննի պատմում նկարագրված այն դրվագը, որտեղ Դավիթին իր քուստուն փահչկաններին առած գնում է «Հազրբեջան» ու պսակում նրանց տեղում հանդիպած քառասուն քույրերի հետ: Մեկ այլ փոփոխակում վարդապետի խորհրդով Սանասարն ու Բաղդասարը կնության են առնում յոթ ճյուղ ներկայացնող քույրերին: (Տե՛ս «Սանա ծուր», հ. Ա, էջ 135, 220):

⁵⁹ Տե՛ս «Արևելք», 1902, Ձ 4872:

⁶⁰ Հմմտ. աղբրեղանցիների հետևյալ ասացվածքի հետ. «Կնոջ մահվան դեպքում թող տխրի նա, ով քենի շունի» (Народы Кавказа, т. II, էջ 134):

⁶¹ ՀՄՄԸ Թալինի շրջանի՝ Կաթավաձոր գյուղում հաստատված Սասունի Գրմավ գյուղացի Մարթա Մանուկյանը թուրքերի կողմից ամուսնու զաղանաբար սպանելուց հետո դառնում է նրա հորեղբոր որդու կինը, իր հետ տանելով երկու երեխաներին (ԳԱՆ, տ. Ձ 3, էջ 62): Լեիրատի

Լեիրատը հնագույն շրջանում բնորոշ է եղել Առաջավոր Ասիայի համարյա բոլոր ցեղերին և ժողովուրդներին: Այսպես, խեթական օրենքների № 220 հոդվածում ասվում է. «Որևէ տղամարդ մահանալու դեպքում, վերջինիս եղբայրը սովորույթի իրավունքի հիման վրա ամուսնանում է նրա կնոջ հետ: Այդ կնոջ հետ կարող է ամուսնանալ նաև մահացածի հայրը: Իսկ եթե հայրը մահանա, նրա եղբայրներից մեկն ու մեկը նույնպես կարող է ամուսնանալ նրա կնոջ հետ, որը թույլատրվում է օրենքով»⁶²: Բայց վաղ միջնադարում հայերի շրջանում ազգային եկեղեցու ընդունած հատուկ օրենքներով լեիրատային ամուսնությունը դադարում է իրավական և սովորութեական նորմ լինելուց: Եվ ի տարբերություն հարևանությամբ ապրող քրդերի և այլ մահմեդական ժողովուրդների⁶³, որոնց մոտ լեիրատը մինչև XIX դարը շարունակում էր մնալ իբրև իրավական և սովորութային նորմ, աղձնիքահայերի մեջ XIX դ. այդ երևույթները պայմանավորված էին վերապրուկայնությամբ, ինչպես նաև նպատակահարմարությամբ:

Հայոց կանոնական և սովորութեական իրավունքի համաձայն, հանուն որդեծնության, ժանանց ունենալու, որի մղիչ ուժը սեփականատիրական հարաբերությունն էր, հողը, ունեցվածքը, տունը կամ ծովալը ժառանգին փոխանցելու, տիրազուգի շքողնելու անհրաժեշտության գիտակցությունը, ամուլ կնոջ ամուսնուն թույլատրվել էր ունենալ երկրորդ կին: Երկկնությունը բնորոշ է եղել նախաքրիստոնեական հայերին, որի վերաբերյալ առատ նյութ կարելի է քաղել հայ ժողովրդական էպոսից՝ «Սասնա ծռերից»⁶⁴: Սակայն հետագայում քրիստոնեական եկեղեցու կողմից այն խստորեն դատապարտվել է: Հասարակությունը բացասաբար է վերաբերվել նման երեվույթների նկատմամբ: Այսպես, քրդերի և թուրքերի անմիջական ազդեցությամբ XIX դ. և XX դ. սկզբին, որոշ աղձնիքահայեր առաջին կնոջ ամուսնանալու և այլ պատրվակով երկրորդ կին էին ունենում, որը չէր հանդուրժվում⁶⁵: Այդ սովորույթը մասամբ հատուկ էր նաև Իրանում բնակվող հայերին, մինչդեռ Հայաստանի մյուս ազգաբնակչության շրջաններում երկկնություն չկար: Օտարածին այդ սովորույթն էր պատճառը, որ երկկնության դեպքեր արձանագրվել են մեր կողմից նույնիսկ ՀՍՍՀ Աշտարակի և Թալինի շրջանում վերաբնակված աղձնիքահայերի մեջ⁶⁶: Առաջին կնոջ մահանկցությամբ էլ կատարվում էր երկրորդ կնոջ պսակը թոնրի կամ թվեթի (օշախի) վրա: Նման պայմաններում առաջին կինը համարվում էր տանդգինը՝ տան ներքին գործերի ղեկավարը, որի ձեռքում էր պահվում բանալիների տրցակը. նա էր հաց եփողը, հյուրերին ընդունողը, երկրորդ կնոջից ծնված երեխաների խնամողն ու դաստիարակը: Լավագույն նշարանը նրան էր հատկացվում: Երկրորդ կնոջից ծնված երեխաներն առաջին կնոջը «նանե», «զայե», «մամա» էին անվանում՝ մայրիկ նշանակությամբ, իսկ իրենց մորը կոչում էին անունով:

Աղձնիքի բնակչությունը թեև միատարր չէր, բայց այստեղ արգելվում էր հայերի ամուսնությունը այլազգիների հետ⁶⁷: Բացառություն են կազմել հայ աղջիկներին առևանգելու դեպքերը և հարկադրական ամուսնությունները, երբ հայը պետք է զոհաբերեր իր դստերը՝ ընտանիքին և ազգատոհմին սպառնացող հալածանքներից խուսափելու նպատակով: Արևմտյան Հայաստանում մահմեդական տարրերը հանուն իրենց սեռնդի գեղեցկացման, առողջ ու բազմաշնորհ դարձնելու, առևանգում էին հայոց, ասորիների, հույների ու վրացիների գեղեցիկ աղջիկներին: Հայերը հենվելով քրիստոնեության սկզբունքների վրա և համատարած ձուլման վտանգ զգալով՝ բնականաբար պիտի խուսափեին օտարների հետ խնամիանալուց: Այդ պատճառով էլ եկեղեցական կանոնական նորմերով այդ արգելքը սրբազորովեց: Այլապես իր դավանանքից հրաժարվելուց և քրիստոնեություն ընդունելու գնով միայն կարող էր արժանանալ եկեղեցու կողմից նշանադրության օրինականացմանը: Սակայն քաղաքական անբարենպաստ իրավիճակը (հաճախ էլ տոհմական շահերը) երբեմն ավելի զորեղ էին գտնվում կանոնական նորմերից և հանդուրժվում

սկզբունքով ամուսնություն կարելի է հանդիպել «Սասնա ծռեր» էպոսում. Դավթի մահից հետո Խանդութին լեիրատային ամուսնություն է առաջարկում Վերգոն (տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 60, հ. Բ, մ. Ա, էջ 91):

⁶² Louis Delaporte, Les Hittites, Paris, 1936, էջ 220.

⁶³ Տե՛ս Ա. Ավրալ, Անդրկովկասի քրդերի կենցաղը, էջ 64, М. Ковалевский, Современный быт и древний закон, Москва, 1886, էջ 286:

⁶⁴ Տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 547—549, հ. Բ, մ. Բ, էջ 612:

⁶⁵ Ուխտավոր, Կրկնամուսնության դեպքեր Մշո մեջ, «Արևելք», 1902, № 4852, 4872: Հմմտ. «Մասիս», 1885, № 3756, էջ 674:

⁶⁶ ԴԱՆ, տ. № 3, էջ 104—108, 117:

⁶⁷ ԴԱՆ, տ. № 1, էջ 47:

էին այլադավանների հետ խնամիական կապերը, որպիսի շեղումներ վկայված են նաև հայ պատմիչների երկերում⁶⁸ ու ժողովրդական բանահյուսության մեջ⁶⁹:

Այսպիսով, ամուսնությունը Աղծնիքում կարգավորվում էր սովորույթային իրավունքի բազմադրյալ ուղի անցած և օրենքի ուժ ստացած որոշակի նորմերով: Հայրիրավական սկզբունքներով օժտված նահապետական գերդաստանը շատում էր իր որևէ անդամի ամուսնությունը ծառայեցնել շահավետ խնամիական կապեր ստեղծելու և իր ինչքային դիրքը էլ ավելի ամրապնդելու նպատակներին: Դրանով էր հիմնականում պայմանավորված ընտրության հարցում ամուսնացողների անշան դերը և բռնի ամուսնությունների համեմատաբար լայն կիրառումը աղծնիքահայերի կենցաղում, շնայած հայտնի են նաև հոժարակամ ընտրության և ամուսնության դեպքեր:

XIX դ. և XX դ. սկզբներին Աղծնիքում հայտնի էին ամուսնության երկու հիմնական տիպ՝ 1) փոխադարձ համաձայնությամբ (պատգամախոսությամբ) գլխագին-դալանի վճարումով, 2) առևանգմամբ: Այս բաժանումը բավականաչափ պայմանական է, որովհետև առևանգման դեպքում ևս չէր բացառվում պատգամախոսությունը և դալանի վճարումը (իհարկե ավելի քիչ), սակայն այստեղ հիմք է ընդունվում կին ձեռք բերելու անմիջական եղանակը:

Նշված երկու տիպի սահմաններում նկատելիորեն բազմազան էին ամուսնության ձևերը, որոնք կյանքի էին կոչված յուրաքանչյուր կոնկրետ պահի թխնորանքով: Այսպես՝ խիստ արտամուսնական լինելու պայմաններում, այնուամենայնիվ դիտվում էին և մերձամուսնության դեպքեր, ընտանիքը մենամուսնական էր, բայց երկկնությունը չէր բացառվում, ամուսնությունը հայրատեղային էր, սակայն հայտնի էին տնփեսայության օրինակներ: Թեև ոչ այնքան հաճախ, բայց հանդիպում էին նաև քննամուսնության ու տեգրամուսնության դեպքեր:

Այս ամենը լավագույն վկայությունն է այն բանի, որ կենցաղա-մշակութային երևույթները, մասնավորապես ամուսնա-ընտանեկան հարաբերությունները, չեն կարող բնորոշվել միակողմանի ու միանշանակ, քանզի դրանք նույնքան բարդ ու բազմաբովանդակ են, որքան ժողովրդական կենցաղը և այդ կենցաղը բնորոշող սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական ու բարոյական պայմանները:

Р. А. НААПЕЛЯН—Формы выбора и брака у ахдзникских армян.—В статье следуются формы брака у ахдзникских армян, характерные для второй половины XIX—начала XX вв. Материалы, положенные в основу статьи, собраны автором среди репатриантов из Ахдзника, чудом спасшихся от геноцида, и их потомков, проживающих ныне в пределах Талинского, Аштаракского и ряда других районов Советской Армении. Как показал анализ, в этом и других историко-культурных районах, наиболее распространенными формами брака были браки по сватовству, при которых воля родителей имела решающее значение. Браки путем похищения и с выкупом в рассматриваемый период уже были изжиты, потеряв свои основания. Однако если сторона женщины была не в состоянии выплатить дополнительную сумму для подготовки приданого невесты, невеста соглашалась на «убег» из родительского дома, что не может быть квалифицировано как брак путем похищения. Среди армян Ахдзника частично было принято обручение детей с колыбели—«оророцахаз», левират и уксорилокальность. Хотя многоженство не было характерно для армян, однако в редких случаях, при бесплодности первой жены встречалось двоеженство. В историческом аспекте весьма примечательно, что в героическом эпосе «Сасунци Давид», сложившемся преимущественно на территории исторического Ахдзника, сохранились сведения о различных древнейших формах брака. Отголоски этих обрядов и обычаев явственно прослеживаются в свадебных ритуалах армян Ахдзника, многие из которых имеют общеармянский характер.

⁶⁸ Հայ պատմիչներից Քավմա Արծրունին (Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 241) և Հովհաննես Դրասխանակերտցին (Պատմութիւն Յովհաննէս կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 145, 227—228) վկայում են, որ հայ իշխանական տները երկրի անկախության շահերից ելնելով հարկադրաբար խնամիանում էին այլակրոն արարների հետ:

⁶⁹ Այս երևույթը նույնությամբ արտացոլում է գտել մեր ազգային էպոսում, երբ քաղաքական ըռնության հիման վրա հայոց թագավորի դուստր Սովինարը կնության է տրվել Բաղդադի խալիֆին: «Սասունցի Դավիթ» էպոսի մի շարք պատմիչների համաձայն այլազգի է եղել նաև Խանդուբե: Սակայն Խանդուբի հետ Դավթի ամուսնանալու փաստը որպես շեղում կանոնական նորմերից, հարթվում է նրանով, որ Խանդուբը ամուսնությունը դառնում է քրիստոնյա Խանդուբին քրիստոնյա դարձնելը վկայում ընդունում է հետաքրքիր ձև՝ Դավթի չորս խաչած համրույրներով (տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա. պատ. Ժ.):